ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1 Հայաստանի Հանրապետության 2018 թվականի փետրվարի 9-ի ՀՕ-110-Ն քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 202-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 8-րդ կետով.

«8) Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուման գործերի վարույթը»

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ ~~22.1~~ 27.2գլխով.

«~~Գլուխ 22.1 Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուման գործերի վարույթը~~

ԳԼՈՒԽ 27.2 ՊԱՏՎԻՆ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆԸ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՄԲԱՎԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված ~~203.1~~ 234.5. Հայցադիմումը վարույթ ընդունելը

1) Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հոդված ~~203.2~~ 234.6. Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուման գործերի վարույթի ժամկետները

1) Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուման հայցերը առաջին ատյանի դատարանում քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո ՝ ~~երկամսյա~~ եռամսյա ժամկետում:
2) Վերաքննիչ դատարանը եզրափակիչ դատական ակտի դեմ ներկայացված բողոքը քննում և որոշում է կայացնում բողոքը վարույթ ընդունելուց հետո երկամսյա ժամկետում:
3) Վճռաբեկ դատարանը եզրափակիչ դատական ակտի դեմ ներկայացված բողոքը վարույթ ընդունելու հարցը որոշում է մեկամսյա ժամկետում:
4) Վճռաբեկ դատարանը վարույթ ընդունված վճռաբեկ բողոքը քննում և որոշում է կայացնում եռամսյա ժամկետում:

Հոդված ~~203.3~~ 234.7. Հայցադիմումի պատասխան ներկայացնելու ժամկետը

1) Հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ստանալուց հետո ~~մեկշաբաթյա~~ երկշաբաթյա ժամկետում:»: